ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿԵՆ-ՀՄԱԽԾՁԲ-2024/34ՏՀ

«30» 09 2024 թ.

ք. Երևան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Սողոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***Տ-8-56, /Մ-2/ - Հարժիս ավտոճանապարհի կմ0+000 - կմ8+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության*** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին և պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1. 3 Սույն պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսացել նաև **ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշումը:**

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ ոչ պատշաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) պատշաճ մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 S-8-56, /Մ-2/ - Հարժիս ավտոճանապարհի կմ0+000 - կմ8+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման երաշխիքային ժամկետ է համարվում կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները 3 (երեք) տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար Կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին ներկայացրել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով կապալառուի կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած կամ չպահպանված լինելու վերաբերյալ:Ընդ որում հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Տեխնիկական հսկողության ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են համամասնորեն՝ հաշվի առնելով նույն ժամանակահատվածում իրականացվող տվյալ հատվածի՝ շինարարական աշխատանքների ծավալները:

3.6 Եթե որևէ ճանապարհի շինարարական աշխատանքների համար չկնքվի համապատասխան կապալի պայմանագիր և չիրականացվեն շինարարական աշխատանքներ՝ տեխնիկական հսկողության ծառայություններ նույնպես չեն մատուցվելու և վճարումներ այդ մասով չեն իրականացվելու:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **4 638 000** (չորս միլիոն վեց հարյուր երեսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2, 5.3 և 5.5.1 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, ,կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 կետում նշված գրավոր հավաստումը չտրամադրելու համար Կատարողի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը	Խախտումը վերացնելու համար տրամադրվող ժամկետները	Խախտումը կրկնվելու դեպքում տրամադրվող ժամկետները
1	Կապալառուի կողմից շինարարական նյութերի արդյունահանման	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով	5 օր	Չի տրամադրվում

	թույլտվություն չունենալու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով		
2	Կապալառուի կողմից շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն չունենալու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	3 օր	Չի տրամադրվում
3	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից աղբի, կենցաղային թափոնների և օտար առարկաների չհեռացման մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	1 օր	1) Շին. աղբի մասով – Չի տրամադրվում 2) Կենցաղային թափոնների և օտար առարկաների մասով – 1 օր
4	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութի և հողի վերին շերտի չտեղափոխման և հատուկ նախատեսված վայրերում չպահելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	2 օր	Չի տրամադրվում
5	Նախագծային փաստաթղթերով չնախատեսված դեպքերում ծառաթփային բուսականությունը հատելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	Չի տրամադրվում	Չի տրամադրվում
6	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չլինելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	1 օր	Չի տրամադրվում
7	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվակրիչների (ծրագծի սկզբում և վերջում) չտեղադրման մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	5 օր	Չի տրամադրվում
8	Վտանգավոր տեղամասը չցանկապատելու, շինարարական տեղամասում ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն) չպահպանելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	1) Նշանների մասով – 3 օր 2) Լուսաազդանշանային առկայծող լապտերների մասով - առավելագույնը - 12 ժամ	1) Թեքված, ծռված, վնասված, բացակայող ճանապարհային նշանների վերականգնման համար – 1 օր: 2) Վնասված լուսաազդանշանային առկայծող լապտերների վերականգնման համար – 4 ժամ:
9	Տեղամասերում կուտակված շինարարական աղբը, թափոնները	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով	1 օր	Չի տրամադրվում

	հատուկ հատկացված վայրեր չտեղափոխելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով		
10	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում սանիտարական պայմանների չապահովման մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	5 օր	Չի տրամադրվում
11	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցների բացակայության մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	1 օր	Չի տրամադրվում
12	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի կողմից հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) չկրելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	4 ժամ	1 ժամ
13	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն) չպահպանելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրել	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	2 ժամ	Չի տրամադրվում
14	Շինարարական սորուն նյութերը և թափոնները ճաշկված բեռնատարներով չտեղափոխելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	Չի տրամադրվում	Չի տրամադրվում
15	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չլինելու (ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք) մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրել	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 3 (երեք) տոկոսի չափով	24 ժամ	4 ժամ

5. 5. 2. Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 2 (երկու) տոկոսից, իսկ առավելագույնը 6 (վեց) տոկոսից:

5. 5. 3 Պայմանագրով սահմանվող պատասխանատվության միջոցների աղուսյակում նշված բոլոր խախտումների համար տուգանքի տոկոսների հանրագումարը չպետք է գերազանցի պայմանագրի ընդհանուր գնի 50 (հիսուն) տոկոսը, իսկ 50 (հիսուն) տոկոսը գերազանցելու դեպքում պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուին կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողը գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	**««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ**
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ ք.Երևան, Աճառյան 1-ին նրբանցք.24
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մասնաճյուղ
ՀՀ 900011002632	Հ/Հ 2472304022130000
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 01064204
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն
Ա. Երիցյան	Ռ. Սողոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«30» «09» 2024 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԽԾՁԲ-2024/34ՏՀ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	71351540/106	Ստորև	դրամ	**4 638 000**	1	ՀՀ, ք. Երևան կառավարական Տուն 3	Ստորև

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

S-8-56, /Մ-2/ - Հարժիս ավտոճանապարհի կմ0+000 - կմ8+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման

Ծրագրի անվանումը — ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում

Ֆինանսավորման աղբյուր — ՀՀ պետական բյուջե

Պատվիրատու — ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Ծառայության անվանումը — S-8-56, /Մ-2/ - Հարժիս ավտոճանապարհի կմ0+000 - կմ8+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության

Ծառայության նպատակը — Ծառայության հիմնական նպատակն է՝ իրականացնել ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ ամենօրյա Տեխնիկական հսկողություն, հավաստիանալու, որ շինարարական աշխատանքներն իրականացվեն գործող շինարարական նորմերի և կանոնների, աշխատանքային նախագծերի, պայմանագրի և կիրառելի այլ փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ շինարարական աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելու և բարձր որակ ապահովելու համար:

Ճանապարհահատվածները

հ/հ	**Օբյեկտի անվանումը**	**Երկարությունը /կմ/**	**Մարզ**	**Շին. աշխ. կատ. ժամկետ (Հաշված՝ շինարարի հետ կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրից)**
1	2	3	4	5
1	S-8-56, /Մ-2/ - Հարժիս ավտոճանապարհի կմ0+000 - կմ8+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ	8,0	Սյունիք	**130** օր

Նախատեսված շինարարական — Ըստ նախագծային փաստաթղթերի

աշխատանքի տեսակը Տեխնիկական հսկողության ծառայության մատուցման ձևեր, եղանակներ և ընդհանուր պահանջներ

1. Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն, ապահովելով տեխնիկական հսկողության ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեղամասային հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում, համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում (https://www.arlis.am/documentView.aspx?docID=19495) բերված հետևյալ դրույթների.

1.1 Տեխնիկական հսկողությունն իրականացվում է հսկողական ստուգումներով, բացումներով, հսկողական չափագրումներով, աշխատանքների նախագծային ծավալների ստուգումներով, փորձարկումներով:

1.1.1 Հսկողական ստուգում - պարզում է արդեն կատարված շինմոնտաժային աշխատանքների համապատասխանությունը նախագծային լուծումներին և շինարարական նորմերին և կանոններին: Հսկողական ստուգումը կարող է իրականացվել համատարած կամ ընտրովի:

1.1.2 Բացում - հողով կամ այլ կոնստրուկցիաներով ծածկված շինարարական կոնստրուկցիաների, կոմունիկացիաների և կառուցվածքների վիճակի ստուգումն է ուղղահայաց փոսերի օգնությամբ կամ ծածկող կոնստրուկցիաների մասնակի քանդման ճանապարհով:

1.1.3 Հսկողական չափագրություն - փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների ստուգումն է տեղում:

1.1.4 Նախագծային ծավալների ստուգում - աշխատանքային գծագրում, ամփոփագրերում, ծավալաթերթ-նախահաշիվներում նշված աշխատանքների ծավալների ստուգում:

1.1.5 Փորձարկում - լաբորատոր պայմաններում կամ տեղում փորձնական բեռնվածքների գործիքների և մեխանիզմների օգնությամբ կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի կրողունակության, ամրության, տարբեր տեսակի մեկուսացման, ինչպես նաև այլ ֆիզիկամեխանիկական և տեխնիկական հատկությունների ստուգումն է նախագծի պահանջների և կիրառելի նորմերի հետ համեմատելու նպատակով:

1.2 Ստուգումների և դիտարկումների արդյունքները ձևակերպվում են ակտերով, արձանագրություններով, ուրվագծերով, գծագրերով, լուսանկարներով, տեսաֆիլմերով և նրանց կից համեմատական ամփոփագրերով, աշխատանքային գծագրերով, շինարարության վարման ընդհանուր մատյաններով:

1.3 Շինմոնտաժային աշխատանքների, օգտագործվող նյութերի, կառուցվածքների, սարքավորումների, աշխատանքների կատարման տեխնոլոգիաների և այլնի որակի վերաբերյալ նկատված թերությունների վերացման ցուցումներն ու դիտողությունները գրանցվում են սահմանված ձևի շինմոնտաժային աշխատանքների վարման ընդհանուր մատյանում:

1.4 Խորհրդատուն պարտավոր է՝

1.4.1 հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին,

1.4.2 ուսումնասիրել և հաստատել կապալառուի որակի ապահովման պլանը, աշխատանքների ծրագիրը, երթևեկության կառավարման պլանները, գնահատել ու վերահսկել շինարարական աշխատանքների իրականացումը,

1.4.3 ստուգել շինարարությունում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի, լաբորատոր փորձարկումների արդյունքների գոյությունը և նախագծի ու արտադրանքի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում արգելել դրանց օգտագործումը, այն ձևակերպել համապատասխան ակտերով,

1.4.4 ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, ինչպես նաև

օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների որակի հավաստագրերը, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ըստ անհրաժեշտության տեխնիկական հսկողը կարող է կապալառուից պահանջել լրացուցիչ լաբորատոր փորձարկումների իրականացում:

1.4.5 ուսումնասիրել, հաստատել և իրականացնել մոնիտորինգ կապալառուի կողմից շինհրապարակում օգտագործվող շինարարական նյութերի աղբյուրի նկատմամբ,

1.4.6 ուսումնասիրել և ստուգել օգտագործվող շինանյութերի որակը և կապալառուի կողմից կատարված աշխատանքները, անհրաժեշտության դեպքում պահանջել փոփոխել այն շինանյութերը և աշխատանքները, որոնք չեն համապատասխանում պահանջվող որակի պահանջներին: Սույն գործառույթը իրականացնելու համար խորհրդատուն պետք է ունենա համապատասխան լաբորատոր փորձարկումներ իրականացնող ընկերության հետ կնքված պայմանագիր: Տվյալ լաբորատոր փորձարկումների հետ կապված ծախսերը պետք է ներառվեն Խորհրդատուի հետ կնքվող պայմանագրի ընդհանուր գնի մեջ, պայմանագրի ընդհանուր գնի մինչև 2% չափով:

1.4.7 կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը, տեխնիկական պահանջները:

1.4.8 մասնակցել ավտոճանապարհների և ինժեներական կառուցվածքների նշահարմանը, շինարարության ընթացքում կատարել գեոդեզիական ստուգողական չափումներ և չափագրություններ,

1.4.9 համաձայնեցնել ինժեներական սարքավորումների տեղադրման, գրանցման և փորձարկման հետ կապված հարցերը համապատասխան կազմակերպությունների հետ,

1.4.10 պարբերաբար ստուգել բոլոր կատարված շինմոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին,

1.4.11 շինարարության ամբողջ ընթացքում վարել մատյան, որտեղ կարվեն ամենօրյա գրառումներ աշխատանքի ծավալների, ստուգումների և այլ աշխատանքների մասին, ինչը հիմք կծառայի ամսեկան հաշվետվությունների համար և կպարունակի հետևյալ տեղեկությունները.

- ✓ աշխատանքային օրվա սկիզբը և ավարտը,
- ✓ աշխատանքներն իրականացնելու կապալառուի հնարավորությունը (անհրաժեշտ սարքավորումների և աշխատուժի առկայության, տեխնիկական պայմաններ, աշխատանքների կատարման համար անվտանգ պայմաններ),
- ✓ օրվա ընթացքում շինհրապարակ բերված շինանյութերը և սարքավորումները (անվանումը, քանակը, որակի երաշխիքը և/կամ լաբորատոր ստուգումների արդյունքները)
- ✓ օրվա ընթացքում կապալառուի կողմից կատարված աշխատանքները՝ անվանումը, վայրը, ծավալը և այլն,
- ✓ շեղումներ նախագծային փաստաթղթերից և ձեռնարկված համապատասխան միջոցներ,
- ✓ արտակարգ իրավիճակներ, դժբախտ պատահարներ և աշխատանքների կատարման չնախատեսված ընդհատումներ (նշել պատճառները)
- ✓ ստացված բողոքները՝ ուղարկված և հասցեագրված ինչպես համայնքների, այնպես էլ աշխատողների կողմից,

✓ գրանցված և զեկուցված պատահարներ, այդ թվում՝ մահվան ելքով դեպքեր (ըստ Շրջակա միջավայրի և սոցիալական պատահարների վերաբերյալ հաշվետվողականության մեխանիզմի):

1.4.12 իրականացնել պատասխանատու կոնստրուկցիաների և հանգույցների միջանկյալ ընդունումը, այն ձևակերպել համապատասխան ակտերով,

1.4.13 շինարարության ընթացքում աշխատանքային գծագրերում ամրագրել հաստատված նախագծում սահմանված կարգով կատարված բոլոր փոփոխությունները,

1.4.14 շինարարության վարման մատյանում նշել հայտնաբերված թերությունների ու դրանց վերացման մասին ցուցումներն և դիտողությունները,

1.4.15 մասնակցել հեղինակային հսկողության, պետական քաղաքաշինական հսկողության և այլ լիազորված մարմինների կողմից անցկացվող շինարարության որակի ստուգումներին և հետևել հայտնաբերված թերությունների ժամանակին վերացմանը,

1.4.16 իրականացնել և ապահովել աշխատանքային անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ պատշաճ հսկողություն: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, ճանապարհային անվտանգության սարքերի համապատասխանությունը (օրինակ՝ ժամանակավոր և շարժական պատնեշները, վթարային արգելափակոցները և այլն), անվտանգության այլ միջոցների առկայությունը՝ շինարարության ընթացքում երթևեկության կազմակերպման հաստատված սխեմաների համապատասխան:

1.4.17 ուսումնասիրել և հաստատել երթևեկության կազմակերպման սխեմաներ և դրանում կատարվող փոփոխությունները,

1.4.18 կատարել համապատասխան ուսումնասիրություններ և առաջարկել ճանապարհային անվտանգության բարելավումներ ու անհրաժեշտ միջոցառումներ: Իրականացնել այցեր ճանապարհային օբյեկտներ՝ գիշերային և ցերեկային ժամերին (այդ թվում՝ Պատվիրատուի և ճանապարհային ոստիկանության մասնակցությամբ): Ներկայացնել հաշվետվություն՝ կատարված ուսումնասիրությունների, ճանապարհային անվտանգության մասով հայտնաբերված խնդիրների, յուրաքանչյուր խնդրի համար իրականացնել ռիսկերի գնահատում, և տալ առաջարկություններ: Ճանապարհային անվտանգության մասնագետները կհամակարգեն ու կվերահսկեն անվտանգության միջոցառումների ժամանակին իրականացումը,

1.4.19 ստուգել բոլոր կատարողական փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար,

1.4.20 ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:

1.4.21 հաստատել կատարողական ակտերը, եթե աշխատանքները կատարվել են համապատասխան որակով և ծավալով,

1.4.22 անավարտ աշխատանքների և թերությունների հայտնաբերման դեպքում կազմել նրանց ցանկը, սահմանել դրանց վերացման ժամկետները, Պատվիրատուին հանձնել այդ տեխնիկական փաստաթղթերը,

1.4.23 մասնակցել սառեցված (կոնսերվացված) կամ դադարեցված շինարարության օբյեկտները կապալառուներից ընդունմանը, ինչպես նաև ակտով նրանց հանձնելուն՝ նշելով այդ օբյեկտների տեխնիկական վիճակը:

1.5 Կատարված աշխատանքների տեսակների ու ծավալների ընդունումը իրականացվում է՝

1.5.1 ծածկվող աշխատանքների ընդունման ակտերի ձևակերպման միջոցով,

1.5.2 կատարված աշխատանքների, օգտագործված կոնստրուկցիաների որակը հավաստող

հավաստագրերի, ինչպես նաև օգտագործված նյութերի լաբորատոր փորձարկումների արդյունքների և որակը հավաստող հավաստագրերի ստուգման և գնահատման միջոցով,

1.5.3 հետագա աշխատանքների իրականացմանը օբյեկտի տեխնիկապես պատրաստ լինելու մասին միջանկյալ ընդունման ակտերի միջոցով:

1.6 Այն հիմնական շինմոնտաժային աշխատանքների ցանկը, որոնց համար անհրաժեշտ է կազմել ծածկված աշխատանքների ընդունման ակտեր, բերված է ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 1-ում: Ծածկված աշխատանքների ընդունման ակտի ձևը բերված է ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 2-ում: Բայցի սույն կետում նշված հավելված 1-ին և հավելված 2-ին կատարված հղումներին, պայմանագրով խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը ստանձնելուց հետո 5 (հինգ) օրյա ժամկետում, Պատվիրատուն Ծառայություն մատուցողին կտրամադրի նաև ճանապարհաշինական հիմնական աշխատանքների համար անհրաժեշտ ծածկված աշխատանքների ընդունման ակտերի ձևեր՝ ըստ աշխատանքների առանձին տեսակների: Ծածկված աշխատանքների ընդունման կազմակերպումը դրվում է աշխատանքներն իրականացնողի վրա: Ընդունման աշխատանքներին մասնակցում են կառուցապատողի տեխնիկական հսկողությունը, գլխավոր կապալառուի, ենթակապալառուների (իրենց մասնակցության մասով), և այլ շահագրգիռ անձինք: Ակտերի օրինակների քանակը համապատասխանեցվում է ակտը ստորագրող անձանց քանակին:

1.7 Շինարարական աշխատանքների և ինժեներական սարքավորումների միջանկյալ ընդունման ակտերի օրինակելի ցանկը համապատասխան ձևի նշումով տես՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 3-ում:

Շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակները ենթակա են մշտական օպերատիվ հսկողության, որը գրանցվում է շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր մատյանում:
Շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակների օրինակելի ցանկը, որոնք ենթակա են որակի հսկողության, բերվում է ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 4-ում:

1.8 Ծածկված և միջանկյալ աշխատանքների օպերատիվ հսկողության արդյունքներով տեխնիկական հսկողությունն իրականացնում է աշխատանքների որակի գնահատում և գրանցում է այն համապատասխան մատյաններում և ակտերում: Շինմոնտաժային աշխատանքների որակի գնահատականը տրվում է ակտում:

2. Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեղամասային հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Խորհրդատուն պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:

3. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պետք է իրականացնեն տեխնիկական հսկողություն աշխատանքները յուրաքանչյուր տեղամասի (ճանապարհահատվածի) նկատմամբ և ընդունեն աշխատանքները՝ նախագծային փաստաթղթերի, ինչպես նաև պայմանագրի պայմանների և տեխնիկական պահանջների համաձայն: Տեխնիկական հսկողություն իրականացնողները պետք է առաջնորդվեն գործող մասնագրերով, սահմանված ստանդարտներով, մեթոդաբանությամբ և ՀՀ օրենսդրությամբ:

Նախագծային փաստաթղթերում նշված աշխատանքների փոփոխություններ կատարելու առաջարկները պետք է համաձայնեցվեն նախագծի հեղինակային հսկողի հետ և հաստատվեն Պատվիրատուի կողմից:
Խորհրդատուն կապալառուի կողմից աշխատանքները չկատարելու և (կամ) ոչ պատշաճ կատարելու դեպքում պետք է կապալառուին ներկայացնի համապատասխան հրահանգներ և ծանուցումներ: Աշխատանքների ոչ պատշաճ կատարման կամ կապալառուի ցածր

	առաջընթացի դեպքում, ինչպես նաև, եթե կապալառուն չի հետևում տեխնիկական հսկողություն իրականացնողի հրահանգներին և չի բարելավում աշխատանքի որակը, Խորհրդատուն Պատվիրատուին ներկայացնում է առաջարկություններ՝ իրավիճակից բխող պայմանագրային և այլ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ: Շինարարական աշխատանքների երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունների վերացման աշխատանքների տեխնիկական հսկողությունը պետք է իրականացնի տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության անձնակազմից՝ համապատասխան շինարարական օբյեկտի տեղամասային հսկիչը:
Նշանակված տեխնիկական հսկիչի տվյալների և հաշվետվությունների ներկայացման պահանջներ	1. Խորհրդատուն պարտավոր է պայմանագրով տեխնիկական հսկողության ծառայությունների կատարման պարտավորությունը ստանձնելուց հետո 3 (երեք) օրյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել տեխնիկական հսկողության համար նշանակված հիմնական անձնակազմի և յուրաքանչյուր շինարարական տեղամասի տեխնիկական հսկիչների (տեղամասային հսկիչի) տվյալները (անուն, ազգանուն, ստորագրության նմուշ, հեռախոսի համար) և անձնակազմի յուրաքանչյուր անդամի կողմից տրված գրավոր հավաստում՝ տվյալ ժամանակահատվածում հասանելիության վերաբերյալ: 2. **Հաշվետվողականությունը.** Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ մոբիլիզացիայի, ամսական և ավարտական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: 3. **Մոբիլիզացիայի մասին հաշվետվություն.** Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան տասնօրյա ժամկետում, Խորհրդատուն պետք է ներկայացնի ամփոփ հաշվետվություն՝ ներգրավված անձնակազմի մասին, իր աշխատանքային պլանը և աշխատանքների կազմակերպման մեթոդաբանությունը, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվություն կամ առաջարկություններ, որոնք կբարձրացնեն տեխհսկողության իրականացման արդյունավետությունը: 4. **Ամսական հաշվետվություններ և ճանապարհաշինական ընկերությունների վճարման հավաստագրեր. ամսական հաշվետվությունները տեխ. հսկողություն իրականացնող ընկերությունը ներկայացնում է** յուրաքանչյուր ամսվա 15-ից ոչ ուշ Պատվիրատուի հետ համաձայնեցված ձևաչափով բոլոր շինարարական աշխատանքների օբյեկտների մասով Տեխ.հսկողություն իրականացնողը պետք է ներկայացնի ամսական հաշվետվություն (Հաշվետվությունը պետք է բաղկացած լինի առանձին գլուխներից՝ ըստ համապատասխան ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքներին վերաբերող պայմանագրերի), նշելով օբյեկտների անվանումը, համապատասխան շինարարական պայմանագիրը, տեղամասը, կապալառուի տվյալները, պայմանագրի արժեքը, աշխատանքների մեկնարկը և ավարտը, հսկողություն իրականացնող ընկերության անվանումը, աշխատանքների համառոտ նկարագրությունը (հիմնական երկրաչափական պարամետրերը և խոշոր աշխատանքների ցանկը): Հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի վերահսկող թիմի կողմից պատրաստված նախորդ ամսվա աշխատանքների ամփոփումը՝ ներառյալ պայմանագրերով սահմանված շինարարական աշխատանքների իրականացման առաջընթացը, ըստ աշխատանքի կատարման ժամանակացույցի, ֆիզիկական և ֆինանսական առաջընթացի տվյալները, կատարված աշխատանքների ընդհանուր նկարագրությունը, արձանագրված թերությունները, դրանց վերացման ուղղությամբ խորհրդատուի կողմից տրված հրահանգները, գոյություն ունեցող խնդիրների համառոտ նկարագրությունները, այդ թվում՝ տեղամասերում արձանագրանցված խնդիրներ և վերջիններիս մասով առաջարկվող լուծումներ, շինարարական աշխատանքների պայմանագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ կապալառուի հարցումները, շինարարական աշխատանքների իրականացման շրջանակներում ստեղծված աշխատատեղերը, ինչպես նաև իրականացվող շին. աշխատանքների պայմանագրերից յուրաքանչյուրի մասով Պատվիրատուի կողմից պահանջվող այլ համապատասխան տեղեկատվություն: Ամսական հաշվետվություններում Խորհրդատուն պետք է ներառի համապատասխան բաժիններ նաև՝ նախկինում զեկուցված խնդիրների կարգավիճակի/առաջընթացի, ինչպես

նաև Տեխսկողի/Պատվիրատուի/Կապալառուների կողմից այդ խնդիրների լուծման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ: Հաշվետվությունը պետք է պարունակի նաև Խորհրդատուի նախորդ ամսվա կատարած աշխատանքների վերաբերյալ գրավոր տեղեկատվությունը և արձանագրությունները (ժամաթերթեր, Պատվիրատուի և կապալառուների հետ նամակագրության պատճենները և այլն), ինչպես նաև որակի հսկողության և կառավարման մասով համապատասխան հաշվետվություններ:
Յուրաքանչյուր Ամսական հաշվետվությանը կից պետք է ներկայացվեն տվյալ ամսվա համար Տեխնիկական հսկողություն իրականացնողի վճարման հայտը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:

4.1. **Հատուկ պահանջներ**. Պատվիրատուի լրացուցիչ պահանջով Տեխ. հսկիչը պարտավոր է ներկայացնել նաև իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

4.2. **Ավարտական հաշվետվությունը.** Ավարտական հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր շինարարական օբյեկտի մասով՝ աշխատանքների հանձնում-ընդունումից հետո՝ 10 օրյա ժամկետում կամ մինչև ծառայությունների ավարտը՝ Պատվիրատուի համար ընդունելի ձևով: Հաշվետվության մեջ պետք է ամփոփվեն բոլոր ճանապարհների վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, կարևոր միջոցառումները, կապալառուների կատարողականը և արդյունքները, տեխնիկական և ոչ տեխնիկական ցուցանիշները, և այլն:

4.3. **Ճանապարհաշինական ընկերությունների վճարման ավարտական հավաստագրերը առնվազն պետք է ներառեն հետևյալ փաստաթղթերի պատճենները**. Ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, կատարված աշխատանքների որակը հավաստող փաստաթղթեր, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով):

Նորմատիվային և օրենսդրական պահանջներ

Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է մատուցվեն համաձայն՝

1. ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի պահանջների,
2. ՀՀ ՀՀ կառավարության թիվ N 2106-Ն 30 նոյեմբերի 2023թ. որոշմամբ հաստատված «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման» կարգի պահանջների,
3. ՀՀ-ում կիրառելի/գործող շինարարական նորմերի պահանջների,
4. Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի պահանջների,

Պայմանագրի կառավարում

5. ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշման պահանջների
6. ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման պահանջների:

1. Խորհրդատուն իրավունք չունի Կապալառուին ազատել իրենց պարտավորությունների կատարումից կամ սահմանել լրացուցիչ պարտավորություններ, որոնք նախատեսված չեն պայմանագրով:
2. Խորհրդատուն ղեկավարվում է կնքված պայմանագրով և ապահովում է պայմանագրի

դրույթների իրականացումը՝ կապված աշխատանքների որակի և ծավալի հետ:

Խորհրդատուի անձնակազմին ներկայացվող պահանջներ

3. Կապալառուների հետ առաջացած ցանկացած արբիտրաժային կամ դատական գործընթացի ընթացքում Խորհրդատուն պարտավոր է աջակցել Պատվիրատուին արբիտրաժային, վիճահարույց հարցերի լուծման խորհրդի կամ դատարանի հետ առնչվող հարցերում՝ նման պահանջ ներկայացնելու դեպքում:

1. Որակյալ ծառայություն մատուցելու նպատակով Խորհրդատուն պետք է ապահովի համապատասխան անձնակազմ՝ բաղկացած որակավորված և ընդունելի փորձառություն ունեցող այնպիսի մասնագետներից, որոնք ունեն համապատասխան կարողություններ տեխնիկական բնութագրով սահմանված պարտականություններն ու գործառույթներն ապահովելու համար: Հիմնական անձնակազմում ներգրավված մասնագետների փոխարինումը կարող է իրականացվել միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությամբ: Պատվիրատուն իրավասու է Խորհրդատուից պահանջել փոխարինելու ներգրավված ցանկացած փորձագետի կամ մասնագետի, իր վրա դրված պարտականությունների ոչ պատշաճ կատարման, մասնագիտական ոչ բավարար կարողությունների և/կամ գիտելիքների դրսևորման դեպքում: Անձնակազմի որևէ անդամի մահվան կամ անաշխատունակության դեպքում Խորհրդատուն պարտավոր է անմիջապես ապահովել տվյալ մասնագետի փոխարինումը ավելի բարձր կամ համարժեք որակավորում և փորձ ունեցող մասնագետով, առանց Պատվիրատուի համար լրացուցիչ ծախսերի: Հիմնական անձնակազմը ենթակա է հաստատման Պատվիրատուի կողմից:

2. Խորհրդատուն պետք է ունենա հետևյալ պաշտոնների և քանակի փորձառու հիմնական անձնակազմ՝

Պաշտոն	Նվազագույն պահանջվող քանակ	Տեղական	Փորձառության նվազագույն պահանջ
Թիմի ղեկավար	1	Միջազգային կամ Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 10 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման, նախագծման և/կամ տեխնիկական հսկողության (ճարտարագետի) մասնագիտական փորձ՝ 7 տարի:
Նյութերի մասնագետ	1	Միջազգային կամ Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 10 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային համար նյութերի/որակի / հսկման մասնագիտական փորձ առնվազն՝ 7 տարի:
Գեոդեզիստ	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 7 տարի: Գեոդեզիական չափագրման մասնագիտական փորձ՝ 5 տարի:
Տեղամասային հսկիչ	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 5 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման և/կամ նախագծման և/կամ տեխնիկական հսկողության մասնագիտական փորձ՝ 3 տարի:

Բացի վերը նշվածից, Խորհրդատուն կարող է ունենալ նաև այլ մասնագետներ և, անհրաժեշտության դեպքում, սպասարկող/ադմինիստրատիվ աշխատակազմ (Խորհրդատուից պահանջվում է այնպես կազմակերպել իր ռեսուրսները, որպեսզի

առաջադրանքը կատարվի արդյունավետ կերպով).

3. Հիմնական անձնակազմը պետք է ունենա ամբողջական ներգրավվածություն ծառայությունների ողջ ժամանակահատվածի համար, չպետք է ներգրավված լինեն վարկային, դրամաշնորհային, սուբվենցիոն և այլ ներդրումային ծրագրերով ու միջոցառումներով իրականացվող շինարարական աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման գործընթացում, բացառությամբ նյութերի մասնագետի և գեոդեզիստի, որոնց ներգրավման կոնկրետ ժամանակահատվածը պետք է սահմանվի ըստ աշխատանքների կարիքների՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցով:

Խորհրդատուի անձնակազմի կողմից պահպանման ենթակա՝ նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելուն ուղղված կանոններ.

4. Տեղամասային հսկիչների ներգրավվածության ժամկետը պետք է սահմանվի մինչև յուրաքանչյուր տեղամասային հսկիչի հսկողության ներքո գտնվող օբյեկտի շինարարական աշխատանքների ավարտական ակտի ընդունումը:

Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու և աշխատողների համար անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ ապահովելու նպատակով կազմակերպությունները պետք է առաջնորդվեն հետևյալ հիմնական կանոններով՝

1. Ապահովել պայմաններ՝ ձեռքերի կանոնավոր և մանրակրկիտ լվացման և չորացման համար: Աշխատավայրում ապահովել ջրի և օճառի, ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչների, եռաշերտ դիմակների, ձեռնոցների առկայությունը:

2. Ապահովել աշխատողների կողմից դիմակների կրումը:

3. Ապահովել փակվող աղբամաններ՝ օգտագործված դիմակները նետելու համար:

4. Յուրաքանչյուր աշխատողի ջերմությունը չափել օրական եկու անգամ (հեռավար կամ անհատական օգտագործման ջեմաչափերով, այդ թվում՝ աշխատակիցների անձնական ջերմաչափերով), որից մեկը աշխատակցի անշխատանքի ներկայանալու ժամանակ, մյուսը աշխատանքի վայրից հեռանալու ժամանակ՝ կատարելով համապատասխան նշումներ գրանցամատյանում: Բաձր ջերմության աշխատակցին հեռացնել աշխատանքի վայրից, հորդորելով ինքնամեկուսանալ և դեպքի մասին անմիջապես տեղեկացնել Պատվիրատուին:

5. ՀՀ առողջապահության նախարարի՝ 2020 թվականի մարտի 16-ի N 977-Ա հրամանի համաձայն՝ սահմանել կանոններ և ընթացակարգեր՝ օրական առնվազն երկու անգամ սահմանված ժամերի ախտահանելու տարածքը (այս դեպքում աշխատանքային ճամբարների տարածքը)՝ դռները, բռնակները, սեղանները, ձեռքով հաճախակի հպման մակերեսները – սարքերի մակերեսները, լույսի անջատիչները, սարքավորումների վրայի բռնակները, հեռակառավարման վահանակները, ընդհանուր օգտագործման հեախոսները, համակարգիչները, ստեղնաշարերը և մկնիկները), սանհանգույցները:

6. Ախտահանման համար կիրառել քլորի հիմքով կամ 60%-90% սպիրտ պարունակող ախտահանիչ նյութերը՝ նյութին կից մեթոդական ուղեցույցին համապատասխան:

7. Ապահովել աշխատատեղերի միմյանցից նվազագույնը 2 մետր հեռավորությունը (ըստ Առողջապահական համաշխարհային կազմակերպության ցուցումների):

8. Անձնական (դրսի) և աշխատանքային հագուստի պահպանման համար ապահովել արտահագուստի (սանիտարական հագուստի) համար նախատեսված հանդերձապահարաններ:

9. Աշխատավայրում վիրուսով ախտահարված աշխատակից ունենալու մասին տեղեկատվություն ստանալու դեպքում անհապաղ առանձնացնել այն անձանց շրջանակը, ովքեր շփում են ունեցել վարակակիր անձանց հետ և հայտնել Պատվիրատուին, ապահովել տվյալ անձանց մեկուսացումը:

Վարչական կարգավորումները	10. Աշխատակազմում վարակի կասկածով աշխատակից ունենալու դեպքում զանգահարել Առողջապահության նախարարության թեժ գիծ և Պատվիրատուին, հնարավորության դեպքում անմիջապես ախտահանել այն տարածքը, որտեղ աշխատել է աշխատակիցը, ինչպես նաև ցանկացած այլ տարածք և մակերես, որը կարող էր հասանելի լիներ տվյալ աշխատակցին: 11. Աշխատողներին տրամադրել իրազեկման տեղեկատվական թերթիկ: Խորհրդատուն պարտավոր է վերահսկել **COVID-19-ի** կանխարգելման ուղղությամբ շինհրապարակում ձեռնարկվելիք միջոցառումների կատարմանը: Ելնելով առկա իրավիճակից, տեխ.հսկողը կներկայացնի առաջարկություններ և Պատվիրատուի հետ համատեղ կմշակի գործողությունների պլան՝ իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ: Ակնկալվում է, որ Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը կկազմակերպի և կկրի Հայաստանում համապատասխան գրասենյակի վարձակալության և կացության համար, ինչպես նաև աշխատանքների իրականացման տեղամասերում, միջազգային և տեղական ճանապարհորդությունների և հսկողության իրականացման համար ավտոմեքենաների և իր անձնակազմի ցանկացած այլ տրանսպորտային ծախսերը, գրասենյակային սարքավորումների, կապի միջոցների, ծառայությունների ու սպառվող նյութերի ծախսերը: Խորհրդատուն պետք է ապահովի բանավոր և/կամ գրավոր թարգմանությունների իրականացումը, որոնք կարող են պահանջվել առաջադրանքի իրականացման ընթացքում (ներառյալ շինարարական տեղամասերում) և ապահովի փաստաթղթերի և հաշվետվությունների անգլերեն և հայերեն տարբերակների համահունչ և ճշգրիտ թարգմանությունը (եթե դրանք անհրաժեշտ են միջազգային անձնակազմի գործառույթների կատարման համար): Համապատասխան վարչական ծախսերը պետք է ներառված լինեն ծառայության արժեքում:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	**Ավարտը**
Կողմերի միջև կնքվող Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, համապատասխան շինարարական աշխատանքների կատարման սկիզբը	Տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման ժամկետի ավարտը սահմանվում է համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,

ՀՀ կենտրոնական գանձապետարան

ՀՀ 900011002632

ՀՎՀՀ 02815457

Գլխավոր քարտուղար՝

Ա. Երիցյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ

ՀՀ ք.Երևան, Աճառյան 1-ին նրբանցք.24

«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մասնաճյուղ

Հ/Հ 2472304022130000

ՀՎՀՀ 01064204

Տնօրեն

Ի. Մորոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«30» «09» 2024 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԽԾՁԲ-2024/34ՏՀ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/106	Տեխնիկա-կան հսկողության ծառայութ-յուններ	...	...	...	...	...	...	...	...	3 014 700	4 638 000	4 638 000	4 638 000	**4 638 000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ
ՀՀ ք.Երևան, Աճառյան 1-ին նրբանցք.24
«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մասնաճյուղ
Հ/Հ 2472304022130000
ՀՎՀՀ 01064204
Տնօրեն
Ռ. Սողոյան

(ստորագրություն)

Հավելված N 2.1
«30» «09» 2024 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԽԾՁԲ-2024/34ՏՀ ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԾԱՎԱԼԸ ԵՎ ՄԵԿ ՄԻԱՎՈՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆԸ

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գինը	Ընդամենը	Տոկոսային կշիռ
1	2	3	4	5	6	7
1	***S-8-56, /Մ-2/ - Հարժիս ավտոճանապարհի կմ0+000 - կմ8+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն***	*դրամ*	*1*	*4 638 000*	**4 638 000**	**100,00%**
	Ընդամենը				**4 638 000**	***100,00%***

Տեխնիկական հսկողության ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են համամասնորեն՝ հաշվի առնելով նույն ժամանակահատվածում իրականացվող տվյալ հատվածի՝ շինարարական աշխատանքների ծավալները:

Եթե որևէ ճանապարհի շինարարական աշխատանքների համար չկնքվի համապատասխան պայմանագիր և չիրականացվեն շինարարական աշխատանքներ՝ տեխնիկական հսկողության ծառայություններ նույնպես չեն մատուցվելու և վճարումներ այդ մասով չեն իրականացվելու:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ
ՀՀ ք.Երևան, Աճառյան 1-ին նրբանցք.24
«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մասնաճյուղ
Հ/Հ 2472304022130000
ՀՎՀՀ 01064204
Տնօրեն
Ռ. Սողոյան

(ստորագրություն)

Հավելված N 2.2
«30» «09» 2024 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԽԾՁԲ-2024/34ՏՀ ծածկագրով պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Պաշտոն	Անուն ազգանուն	Տեղական
Թիմի ղեկավար	Միհրան Գալստյան	Տեղական
Նյութերի մասնագետ	Միեր Մարտիրոսյան	Տեղական
Գեոդեզիստ	Հովհաննես Պետրոսյան	Տեղական
Տեղամասային հսկիչ	Վլադիմիր Միքայելյան	Տեղական

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ
ՀՀ ք.Երևան, Աճառյան 1-ին նրբանցք.24
«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մասնաճյուղ
Հ/Հ 2472304022130000
ՀՎՀՀ 01064204
Տնօրեն
Ռ. Սողոյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«_____» «_____» 2024 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԽԾՁԲ-2024/34ՏՀ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» « _____» 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«_____» «_____» 2024 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԽԾՁԲ-2024/34ՏՀ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն